ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2014թ. N_ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ «ՕՑԵԼՈՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 193-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Շենգավիթ համայնքի ճանապարհների շահագործման «Օցելոտ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն)։

2. Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով։

3. Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում ավարտել Ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի հաշվեկշիռ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ «ՕՑԵԼՈՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Շենգավիթ համայնքի ճանապարհների շահագործման «Օցելոտ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ «ՕՑԵԼՈՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Շենգավիթ համայնքի ճանապարհների շահագործման «Օցելոտ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՇԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ «ՕՑԵԼՈՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շենգավիթ համայնքի ճանապարհների շահագործման «Օցելոտ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որպես առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, ունենալով ընդամենը երկու աշխատակից՝ տնօրեն և հաշվապահ, 2000 թվականից սկսած ծավալել է ճանապարհային շինարարական գործունեություն: Գործունեությունը ծավալվել է վարձակալված հիմնական միջոցներով: 2009 թվականից սկսած կազմակերպությունն իր եկամուտներն ապահովել է փոքր ծավալի պատվերների միջոցով, մեծ մրցույթների չի մասնակցել, քանի որ չի ունեցել սեփականություն հանդիսացող հիմնական միջոցներ, որոնք կհամապատասխանեին պատվիրատուների կողմից ներկայացվող տեխնիկական բնութագրերին, իսկ համապատասխան միջոցների, ինչպես նաև մեքենասարքավորումների և համապատասխան այլ տեխնիկայի բացակայությունը հանգեցրել է աշխատատեղերի կրճատման և աշխատավարձի ֆոնդի նվազեցման:

Գործունեությունը շարունակելու նպատակով, 2014 թվականի 9 ամսվա հաշվապահական հաշվեկշռով ընթացիկ ծախսերը ձևակերպվել են որպես հետաձգված ծախսեր՝ 4789000 ֏/չորս միլիոն յոթ հարյուր ութսունինը հազար/ դրամ՝ 5% շահութաբերություն ապահովելու նպատակով, մինչդեռ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առկա է 4182000 /չորս միլիոն հարյուր ութսուներկու հազար/ դրամի վնաս:

Կազմակերպության ընթացիկ ծախսերի ծածկվածությունը լիարժեք ապահովող պայմանագրերի բացակայությունը հանգեցնում է հետագա գործունեության ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը, որի հետևանքով կազմակերպության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակային:

Ելնելով վերոգրյալից, ներկայացվում է «Շենգավիթ համայնքի ճանապարհների շահագործման «Օցելոտ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ